



## ԱՆԱՀԻՏ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության  
ամբիոնի ասխատենություն

### ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՈՒՂՋ ԻԲՐԵԿ ԱՐԵՎԵԼԱԵՎՐՈՊԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴՈՂ ՇՐՋԱՆ

Ազգային Վերածնունդը, որը գիտական գրականության մեջ գործածվում է չեխական, սլովակյան, բուլղարական, սերբական մշակույթների վերաբերյալ, համարվում է արևմտյան Վերածննդի շարունակությունը Արևելյան Եվրոպայում:

Հայոց պատմության մեջ Ազգային Վերածնունդը սկսվում է XVIII դարում, և գիտական գրականության մեջ այն անվանվում է «Միսիթարյան Վերածնունդ»: Այդ ժամանակաշրջանում սկիզբ է առնում հայ ազգի հոգևոր վերածնունդը, և Միսիթարյան ների շնորհիվ Եվրոպական քաղաքակրթության և հայկական իրականության միջև փակ դռները բացվում են: Միսիթարյան միաբանները հայ մշակույթի գանձերը համակարգում և ներկայացնում են Արևմուտքին:

Հայոց Ազգային Վերածնունդը առաջինն է համաշխարհային պատմական գործընթացում և արևելյան Եվրոպական վերածնական շարժմանը նախորդել է մեկ դար: Միսիթարյան Սեբաստոսին և Միսիթարյանները սկսեցին ուսումնական, գիտական, քարոյական, լեզվական, գաղափարական հզոր պատմական շարժում՝ վերականգնելով ընդհատված ավանդույթները և դարերի կապը, որը դարձավ յուրահասուուկ համալսարան մի ամբողջ ազգի կրթության համար: Միսիթարյանները փորձեցին հայ ոգին ներսից հեղաշրջել՝ առաջին հերթին վերականգնելով հայոց ինքնության էութենական ուժերը և հայ ժողովրդին հպարտ դարձելով իր անցյալով: Մշակութային վերակենդանացումը իրագործվում էր հեռահար նպատակով՝ քաղաքական անկախություն ձեռք բերելու համար: Սա Ազգային Վերածննդի գերխմնիրն էր:

Միսիթարյան պատմության փիլիսոփայությունը ազգը պատմության մեջ տեսնում է իրու սուբյեկտ, որը ակտիվ է, գործուն և կառուցողական, իր լավագույն ապագայի հարցում խիստ շահագրգիռ: Պատմության այս ըմբռնումը նոր հմարավորություն կտա, ինչպես մի քանի անգամ մեր քաղմադարյան պատմության ընթացքում, վերականգնը-վելու (ռեարիլիստացվելու) անընդհատ պարտություններից և հպարտ նայելու պատմական ապագային:

**Հիմնաբառեր.** Հայկական Ազգային Վերածնունդ, Հայկական Զարթոնք, պատմական օրինաչափություն, մշակութային վերակենդանացում, քաղաքակրթությունների բախում, Մխիթարյան մշակութային ազգային քաղաքականություն, արևելաբնույթական վերածնական շարժում, Մխիթարյան պատմափիլիխովայություն

JEL: Z10

**Պատմական օրինաչափությունների անխուսափելիությունը,  
պատմության մարտահրավերները**

Ակնհայտ է, որ պատմական ընթացքը պայմանավորված է բազմաթիվ նախադրյալներով՝ հասարակական, քաղաքական, մշակութային, աշխարհագրական: Առանձին ժողովուրդներ համաշխարհային պատմության՝ իբրև ամբողջի մասերը չեն, այլ ինքնուրույն միավորներ, որոնք ենթարկվում են պատմական զարգացման նույն օրենքներին: Որքան էլ ընդունելի չինի մի շարք փիլիխովաների առաջադրած՝ պատմության համաշխարհային պլանի գաղափար՝ իբրև ի վերուստ տրվածություն, այնուամենայնիվ, անհրաժեշտ է հստակ գիտակցել, որ պատմությունն ունի իր օրինաչափությունները, և յուրաքանչյուր ժողովովի կյանքում գործում են հասարակական և մշակութային նույն օրենքները: Բայց, քանի որ պատմությունը նաև բազմաթիվ բարդ բաղադրիչների միավորում է, ուստի պատմական նույն օրինաչափությունները չեն կարող ապահովել տարբեր ժողովուրդների պատմական ճակատագրերի նույնությունը, և սա պատմության գլխավոր օրենքներից է:

Աշխարհագրական միջավայրը, ցեղի էթնոգենետիկ հատկանիշները, ժողովրդի պատմական ճակատագիրը, քաղաքական իրավիճակը, պատմության թատերաբեմ դուրս գալու ժամանակաշրջանը, հասարակական կեցությունը այն հիմնական կառուցվածքային բաղադրիչներն են, որոնց արդյունավետ միավորումը ապահովում է պատմական առաջընթացը: Նույնական նախապայմանները և դրանց նույնաձև միավորումները կարող են առաջ բերել ժողովուրդների՝ հիմնականում նման (բայց ոչ նույնական) պատմական գործընթացներ կամ գրանցել համանման պատմական միտումներ: Սակայն պատմական բաղադրիչների համակցությունները չափազանց բարդ են, իսկ կառուցվածքային բաղադրիչներն ունեն կարևոր կամ պակաս արժեքավոր կշիռ, ուստի անհրաժեշտ են պատմական գործընթացի անընդհատ և լուրջ կառուցվածքային վերլուծություններ, որպեսզի ազգը, պատմական հանրությը խուսափեն պատմական ճգնաժամից:

Անդրադառնալով Ազգային Վերածնությանը հայոց պատմության մեջ՝ արձանագրենք, որ այն սկսվում է XVIII դարում և գիտական գրականության մեջ անվանվում է նաև «Մխիթարյան դար, Մխիթարյան Վերածնունդ»:

XVIII դարում սկսվում է հայ ազգի հոգևոր Վերածնունդը: Այս ժամանակաշրջանում կրոնական և քաղաքական բազմաթիվ խնդիրներ ծառացան հայ ժողովրդի առջև, տեղի ունեցան քաղաքական այնպիսի իրադարձություններ, որոնք հեղաշրջում առաջացրին հայոց մտավորական զարգացման մեջ, և Վերջապես Եվրոպական քաղաքակրթության և հայկական իրականության միջև փակ դրները բացվեցին:

Վերածննդի շարժման նախասկիզբը կարելի է դիտարկել Ղարաբաղում, երբ Խորայել Օրին, որպես Ղարաբաղի մելիքների պատգամավոր, մեկնում է Եվրոպա, ապա Ռուսաստան՝ ազգային անկախության համար քաղաքական

լուծումներ առաջարկելու և ներկայացնելու քաղաքական ապստամբություն իրականացնելու հայց պատրաստականությունը<sup>1</sup>:

Մխիթար Սեբաստացին նոյն ժամանակաշրջանում մեկնում է Եվրոպա (XVIII դարի առաջին տասնամյակ)՝ իրականացնելու մշակութային քաղաքականություն և կազմակերպելու Եվրոպայի հետ հայության քաղաքակրթական-մշակութային հանդիպումը՝ փորձելով ստեղծել հոգևոր-մշակութային մի այնպիսի օջախ, որը ազգային կրթական-լուսավորական խնդիրները կկարողանար լուծել Եվրոպական դպրանոցների մակարդակին համապատասխան, բացահայտելու հայց պատմության հայտնի և անհայտ խնդիրները, վերականգնելու պատմական արդարությունը, հայության միավորումը՝ քաղաքական ինքնագիտակցության հասնելու ձանապարհով:

Մենք առաջարկում ենք XVI, XVII դարերի նոր ծավալվող մշակութային առաջատվությունը, որը լայն տարածում չստացավ, բայց, միևնույն է, պատմական գարթոնք էր, մշակութային շարժում, անվանել «Զարթոնք» կամ «Նախավերածնություն», իսկ XVIII և XIX դարերի հզոր հեղափոխությունը (մտավոր, ինացական, գաղափարական-հայրենասիրական) «Մխիթարյան Ազգային Վերածնունդ» կոչել<sup>2</sup>:

Կարելի է հիմնավորել, որ Հայկական Ազգային Վերածնունդը արևելա-Եվրոպական Վերածնական շարժմանը նախորդում է գրեթե մեկ դար՝ սկսվելով XVI և XVII դդ., հզոր շարժում դարձնալով XVIII դ., մինչդեռ արևելաԵվրոպական Վերածնական շարժումը խնդրվում է XVIII դ. Վերջին տասնամյակներում, իսկ որոշ երկրներում՝ հիմնականում XIX դ.:

Հայց Ազգային Վերածնունդը այս համեմատության մեջ ունի մի շարք տարրերություններ և առանձնահատկություններ:

Այն առաջինն է համաշխարհային պատմական գործընթացում և սկսում է խնդրվել, ընձյուղվել դեռևս XVII դարում՝ Մովսես Եղիշվարդեցի, Փիլիպոս Ալբակեցի, Հակոբ Զուղայեցի կաթողիկոսների ջանքերով, նաև Բարսեղ Բաղիշեցի, Խաչատուր Զուղայեցի, Կանանդեցի եղբայրների գործունեությամբ («Նախավերածնական» կամ «Զարթոնք» շրջան՝ ի տարբերության բուն Վերածննդի): I. Զորմիսյանը «Վերածնունդ» և «Զարթոնք» հակացություններն օգտագործում է զուգահեռ՝ համարելով, որ դրանք ազգի Վերակենդանանալու ձիգեր են: Մի տեղում գրում է, որ Զարթոնքի մեջ մեծ դեր ունեն Մխիթարյանները, մեկ այլ տեղում, որ այդ ազդեցությունը հայերին փոխանցվել է մեծ Եվրոպայից՝ պատերազմների հետևանքով<sup>3</sup>: Սակայն սկսած XVIII դարի առաջին տասնամյակից, երբ հիմնադրվում է Մխիթարյան միաբանությունը, Ազգային Վերածնունդը Սեբաստացու և միաբանների ջանքերով մտնում է լայնահուն մի շրջան՝ արագորեն վերածելով համաժողովրդական վերածնական շարժման: Իհարկե, պատմական գործընթացը երբեք չի փոխանցվում մեկ ժողովրդից մյուսին, ինչպես մշակութայինը, սակայն պատմական իրադարձությունները կարող են ազդակի դեր կատարել նոյնատիպ

<sup>1</sup> «Հայ ժողովուրդի ազատության դատին համբաւաւոր հսկայել Օրի՝ կը փորձէր այդ դատը գործնական հոդի վլա դնել», տես Յ.Դ. Միրունի «Մխիթարեանք ինչ տուին մեզի», Յառաջ, Փարիզ, 1936 թ., օրաթերթ, N 3279, 26 նոյեմբեր:

<sup>2</sup> Շահ Աբբասի կողմից հայերի բռնի տեղահանումը հանգեցրեց որոշ դրական արդյունքների, թեև սկզբում այն պարզապես աղետաբեր էր: Նոր Զուղան դարձավ առևտրական ուղիների կենտրոն, և ԺՈ դարի հոգևոր-մտավորական գարթոնքը սկսվեց, որը ԺՈ դարում վերածեց Ազգային Վերածննդի:

<sup>3</sup> Տես I. Զորմիսյան, Համապատկեր արեւմտահայց մեկ դարու պատմութեան, Ա հատոր, 1850-1878, Պէյրութ, Դոնիկեան և Եղբայրներ հրատ. 1972 մաս 4, էջ 565:

պատմական ճակատագիր ունեցող և պատմական իրադրության մեջ գտնվող ժողովուրդների համար: Մխիթարյան Վերածնությունը իր կազմակերպածությամբ, խնդիրների լուծման տրամաբանական հերթափոխով և կարգով, բովանդակությամբ, տեսական և գործնական հիմնարար ձևաչափերով դասական օրինակ է:

Պատմափիլիխոփայական գրականության մեջ XIX դարում պատմական գործնրացի մեջ մեծ կարևորություն տրվեց հանձարեղ անհատին, թեև վաղ շրջանի պատմագրությունը այդ ուղղությամբ է շարժվում էր. հերոսները, մեծ անհատները ազդում են պատմական իրադրությունների վրա, նրանք կան առաջ են մղում իրենց ժողովորի ազգային պատմությունը, կամ սեփական ապիկարությամբ տանում նրան կործանման: Սակայն XIX դարում մեծ անհատներին նորից վերադարձվեց պատմական գործնրացները դեկափարելու դերը: Այս տեսությանը ամենակատաղի բանաձևներով դեմ դուրս եկան տնտեսական մատերիալիզմի ներկայացուցիչները՝ հակադրվելով պատմության տարերայնության, պատմական գործնրացի կոլեկտիվ բնույթի տեսությամբ, որը մեծ խանդավառությամբ որդեգրեց խորհրդային պատմափիլիխոփայությունը:

Անհատի պատմական դերի վառ օրինակ է Մխիթար Սեբաստացին: Մխիթարը հանձարի ուժով սկսեց ուսումնական, գիտական, բարոյական, լեզվական, գաղափարական հզոր պատմական շարժում՝ վերականգնելով վաղուց ընդհատված ավանդույթները և դարերի կապը, որը դարձավ յուրահատուկ համալսարան մի ամբողջ ազգի կրթության համար: Լեռյի բնորոշման՝ այդպիսի բեղմնավոր գործունեություն չէր տեսել մեր պատմությունը, և երկար ժամանակ վենետիկցիները «անյաղթելի և աննկուն տիտանների նման էին երևում ազգի աչքին»<sup>4</sup>:

«Եւ ահա երեք անգամ միայն, հազարաւոր տարիների ընթացքում ուժգնութեամբ յայտնվեցաւ հայկական հանձարը՝ Ե, ԺԲ և ԺԹ դարերում (բուն Հայաստանում, Կիլիկիայում և Վենետիկի Մխիթարեան վանքում): ԺԹ դարը հանձարեղ մեծ Մխիթարի եռանդով և Մխիթարեանների գործունեութեամբ Հայութեան վերածննդի դար դարձաւ, գրականական-պատմական երկերի հրատարակութեամբ ազգային ինքնաձանաչութիւն զարթելով զանազան քաղաքներում՝ նոր հաստատված հայկական մտաւոր կենտրոններում»<sup>5</sup>:

Պատմական չափազանց կարձ ժամանակահատվածում Սեբաստացու ստեղծած, ուղեհարդարված կառույցը կարողացավ հրականացնել շրջադարձային նշանակություն ունեցող առաքելությունը:

«Հայկական զարթօնք», «Ինացական վերածնունդ» հասկացությունները Մխիթարի անվան հետ են կապում Լեռն, Ա. Չոպանյանը, Հ. Օշականը, հայագետներ Հ. Գեցերը, Պ. Ֆեթերը, Հ. Հովհաննեսը, Յ. Սիրունին, Ստ. Նազարյանը: «Մխիթարի տունը միշտ կպահէ իր առաջնութեան արժանիքը: Ան է, որ առաջին ջակը բարձրացուցած է ԺԸ դարու սկիզբէն իսկ ... երբ համատա-

<sup>4</sup> Տես Խեց Հայկական տպագրութիւն հ. Բ, մաս Ա, էջ 47, Տիգիս, 1901:

<sup>5</sup> Խորեն Ծայրագոյն Վարդապետ Ստեփանե, Ս. Պետերբուրգ, 1889 թ., Առաջաբան, ԶԲ: Վարդապետ Ստեփանեն հրատարակում է Մովսես Խորենացու «Հայոց Պատմությունը»՝ ներկայացնելով նաև Խորենացու շուրջ ծավալվող ողջ պայքարը: Նա Պետերբուրգի և Սոսկվայի հայերի հոգևոր հովիվն էր, ծայրագոյն վարդապետ: Ստեփանեն Խորենացու Պատմությունը տպագրելու համար ռուսական կառավարության իրամանով պատվում է պաշտոնից, սակայն ի վերջո հաջողացնում է տպագրությունը:

րած մեռելութիւն կը տիրեր Մոսկվա, Պոլիս, Թիֆլիս, Իզմիր ... այս ջահի սրսկած պայծառութենէն ազդուած են իրենց առաջին պափմանը մէջ»<sup>6</sup>:

Ազգային Վերածննդի առանձնահատկությունը և արևելաԵվրոպական Վերածնությունից տարբերությունը պատմական բարեշրջության (Էվոլյուցիա) մեթոդն է, որը կիրառում են Մխիթարյանները (նրանք չեն շեղվում Սեբաստացու ծրագրային քաղաքականությունից), այն է՝ պատմական-մշակութային ժառանգորդնան սկզբունքին բարեշրջության մեթոդի համադրում: Այս մեթոդը չէր գործադրվում արևմտաԵվրոպական Վերածննդի ժամանակ: Նոր խնդիրների լուծումները հիմնված էին և աճում էին անցյալի պատմական-հասարակական-գաղափարական հիմքի (արմատների) վրա, իսկ հինը (պատմականը) Վերականգնվում էր նորի մեջ առանց ձևափոխումների, իր հնագույն, բայց կենդանի ճշմարտություններով՝ իբրև մնայուն արժեք: Այդ քաղաքականությամբ է կառուցված Սեբաստացու լեզվաշինարարությունը, այդ մեթոդով են վերականգնում Մխիթարյանները պատմական անցյալը (հիշենք Խորենացու շուրջ Մխիթարյանների պայքարը համաշխարհային գիտական հանրության հետ): Վերոհիշյալ մեթոդով են գրված Չամչյանի «Հայոց պատմությունը», Ալշանի դարակազմիկ գործերը և այլն:

Մխիթար Սեբաստացին իր դարից շատ առաջ էր անցել՝ որոնելով Արևմուտքի հետ կրոնական հաշտեցման առավել արդյունավետ ձանապարհը. գտնել, պահպանել կրոնի դավանաբանական կողմը՝ արևմտյան, ծիսական-արարողականը՝ ազգային-պատմական, իսկ կրոնի կեցությունը՝ հայկական: Աստվածաբանական-մեկնաբանական աշխատություններում Մխիթարը ընդգծված հայեցի կողմնորոշում ունի. «Զկայ աստուածաբանական խնդիր մը, զոր շօշափած և լուսաբանած չըլլայ, մանաւանդ այնպիսիններ, որոնք ուղղակի կապ ունին ազգային խնդրոց հետ»<sup>8</sup>: Նա ուղիներ էր որոնում ընդհանուր քրիստոնեական դավանաբանություն ձևավորելու համար, որտեղ յուրաքանչյուր ազգ, իր դավանաբանական և մշակութային ճշգրտումը մտցնելով, կարող էր հասնել միասնական քրիստոնեության նախասկզբնական վիճակին: Այդ խնդիրի լուծումները (որը գիտական գրականության մեջ կոչվում է «Էկումենիկ շարժում») ժամանակակից կրոնական քաղաքականության հիմնական մտահոգությունն են, և պատմական առաջընթացը կարողանա ի վերջո այն հանգուցալութել:

Այս գաղափարները հայոց պատմության մեջ արծարծված էին արդեն XII դարում. Ն. Շնորհալին և Ն. Լամբրոնացին Եկեղեցիների միության մասին իրենց տեսակետներով շատ առաջ էին անցել իրենց ժամանակից:

Այսպիսով, Մխիթար Սեբաստացին Վենետիկի Մխիթարյան միաբանության ուժերով դեկավարեց և իրականացրեց Ազգային Վերածնունդը և դարձավ «առ հասարակ վերանորոգիչ բովանդակ ազգիս հայոց... ուզեց, որ ազգերնիս օտար ազգերէն չսպասէ իր լուսաւորութիւնը, հանձարներն ու շնորհքները»<sup>9</sup>: Այս մոտեցումը Ազգային Վերածննդի ուսումնական-կրթական ոլորտի Մխիթարյան նոր մեթոդաբանությունն է և նորարարություն է Եվրո-

<sup>6</sup> Ա. Չապանյան, Անակիտ, 1901, թիվ 8, 179 էջ:

<sup>7</sup> Տե՛ս պատմական մեթոդների մասին՝ Историческая акцентология и сравнительно-исторический метод, М., Наука, 1989:

<sup>8</sup> Կարք Մխիթարյա Աքքայի Սեբաստացու, գրեց Յովհաննէս Վ. Թորոսեան, Յովհաննէս Մխիթարյա, Վենետիկ, 1932, էջ 355:

<sup>9</sup> Գարդիել Վ. Ալվազովսկի, Ուրուագիծ, ոգլոյ եւ ընթացից Մխիթարեան միաբանութեան Վենետիկոյ, Փարիզ, 1857 թ., էջ 18, 21:

պական առումով ևս (այս մեթոդաբանությունն անգամ այսօր է դժվար կիրառելի, իիշենք ներկայիս ուսումնական չարչըկված խնդիրները՝ թելադրված Արևմտաթիվ կողմից):

Մխիթարյան Վերածննդի հիմնական խնդիրը հայ հոգին ներսից հեղաշրջելն է, ստրկության լուծը թոթափելը՝ առաջին հերթին ազգային-հոգևորը կապանքներից ազատագրելով և վերականգնելով հայոց ինքնության էութենական ուժերը, «զայն արթնցնել, հայ ժողովուրդի անցեալը պեղել նախ և հայ ժողովուրդը հպարտ ընել իր անցեալով։ Անոր մատչելի ընել իր պապերուն բարբառը, եւ արևմտաթիվ լոյսը տարածել անոր հոգին մէջ»<sup>10</sup>.

XIV-XVI դարերի արևմտյան Վերածնունդը հաստատում է նոր մարդու ծնունդը և ուրվագծում նոր՝ հումանիստական մշակույթը, հավատում մարդու անսահման հնարավորություններին, և ինչպես Լեռն Բատիստա Ալեքսանդր է նշում՝ մարդը կարող է ստեղծել ամեն ինչ, միայն թե ցանկանա։ Ունեսանյան հումանիզմը նախագծում է մարդու նոր իդեալը՝ ինքնագիտակից անհատը, որը հաստատում է իր հոգևոր ինքնավարությունը և աշխարհընկալման իր անկախությունը։

Մխիթարյանները այս նույնը իրականացնում են ազգի կտրվածքով՝ փորձելով կերտել ազգը՝ իբրև բարձրագույն արժեք, հավաքական կերպար, որի հզորությունը անսահման է, հնարավորությունները՝ անսպառ։ Մշակութային վերակենդանացումը իրագործվում է քաղաքական անկախություն ձեռք բերելու համար։ Սա էր Ազգային Վերածննդի գերխնդիրը։

Հայոց Ազգային Վերածննդի հետ կապված, կարծում ենք, կարելի է լուծված հանարել արևելաեվրոպական Ազգային Վերածնական շարժմանը նախորդելու խնդիրը։ Սակայն որքանո՞վ է այն ազդել արևելաեվրոպական վերածնական շարժման վրա, և ինչպիսի՞ն է այդ ազդեցությունը, դեռևս հետազոտման կարիք ունի։ Մի բան պարզ է, որ հտալիհայում գործող Մխիթարյան միարանությունը ազդվել էր արևմտյան, իտալական Վերածնական ոգուց և իրականացրեց հզոր Ազգային Վերածնունդը։

Այլ ժողովուրդների վրա հայոց մշակութային ազդեցության մասին Մագդա Նեյմանը իր «Հայերը, հանառոտ ակնարկ» աշխատության մեջ գրում է, որ հայերի քաղաքական անցյալը և նշանակությունը համամարդկային պատմության մեջ մինչև այսօր, կարելի է ասել, բոլորովին հետազոտված և բացահայտված չէ։ Ճիշտ է, այնպիսի հանրահայտ Մխիթարյան պատմաբաններ, ինչպիսիք են Չամչյանը, Ինձիճյանը, Ալիշանը, Գարագաշյանը և այլք, հայտնի դարձան իրենց մեծածավալ աշխատություններով, որոնք բազմակողմանի ուսումնասիրությունների համար առատ նյութ են պարունակում հատկապես այն դերի մասին, որ խաղացել են հայերը մյուս ժողովուրդների պատմության մեջ։ Խել այն նշանակությունը, որն ունեցել է հայ մշակույթը համամարդկային պատմության մեջ, ուսումնասիրողները ուշադրության չեն արժանացրել<sup>11</sup>։

Մեր խորին համոզմամբ՝ հայոց Ազգային Վերածնունդը ուսումնասիրելու կարիք ունի, և այն կարելի է դիտարկել իբրև արևելաեվրոպական Ազգային Վերածնական շարժմանը նախորդող շրջան։

<sup>10</sup> Մխիթարեանք ի՞նչ տուին մեզի, Յ.Ճ. Միրունի, Յառաջ, Փարիզ, 1936 թ., օրաթեր, N3279, 26 նոյեմբերի։

<sup>11</sup> Տես Մագդա Նեյման, Արմանե. Կրակի очеркъ ихъ исторіи и современного положенія. С.Петербургъ, Типографія Іо.И. Эрлих, 1899, էջ 64-65:

## ***Մխիթարյանների պատմության իմաստավորումը և ժամանակակից իրականության մարտահրավերները***

Այսօր, առավել քան երեսէ, անհրաժեշտ է վերահնաստավորել մեր պատմության գաղթոնքի շրջանները, որովհետև Արևուտքում սկսվել է դեկադենտական միտում՝ պատմական պատասխանատվությունը վստահել անդեմ մեխանիզմների՝ տեխնիկական, տնտեսական առաջընթացին՝ մարդուն դիտելով թույլ ողակ, առավել ևս լուրջ չընդունելով ազգի գործոնը։ Սակայն հոգևոր գործոնը պիտի դաշնա պատմական նորարարության հիմնական աղբյուրը։

Մխիթարյանները, լինելով արևոտյան քաղաքակրթության կրողը, հասկացել են, որ հնարավոր չէ արևոտյան չափորոշչները մեխանիկորեն կիրառել ոչ Արևուտքի նկատմամբ, փոխանցել արևելյան (այս դեպքում՝ հայկական) մշակութային դաշտ և բազմիցս այն շեշտադրում են։ Արևուտքի տեխնոգեն զարգացման հարացույցը (պարադիզման) տանում է բնապահպանական (որի մեջ մտնում է նաև ազգային-մշակութայինը) փակուղու, ուստի Մխիթարյանները առաջարկում են հոգևոր ռեֆորմացիա, որը վերաբերում է նպատակներին, արժեքներին, մարդու գործունեության իմաստայնությանը։

Արևուտքը ապրում է միայն իր համար ընդունելի իր պատմությամբ և ոչ Արևուտքին էլ է պարտադրում ապրել իր պատմությամբ։ Մխիթարյանները հասկացան, որ պատմական գործընթացի որակը ուղիղ համեմատական է այդ գործընթացում ընդգրկված սուբյեկտների գործունեությանը, հետևաբար հույժ կարևոր է սեփական պատմության իմաստի որոնումը և օրինաչափությունների բացահայտումը։

Սովուս Խորենացին հայկական պատմական գործընթացի տեղադրումը հիմնամարդկային պատմության մեջ արդեն իրականացրել էր՝ ապահովելով միասնական պատմության ստեղծումը։ Մխիթարյանները ընդունեցին այդ ուղերձը և բազմաթիվ փաստարկներով ապացուցեցին, որ մարդկությունը գնում է դեպի համամոլորակային միասնական քաղաքակրթություն։ Սակայն նույն այս Արևուտքը, որը, դեռևս Լուսավորական դարաշրջանից սկսած, հանդես եկավ որպես համամարդկային քաղաքակրթության ձանապարհի պիոններ (և Եվրոպան դարձավ այդ քաղաքակրթության կերտողը), բոլոր ժողովուրդների համար դեմոկրատիայի չափորոշչից, այսօր հանդես է գալիս կասկածելի անջատողական նախաձեռնությամբ։ Շրջանառության մեջ են մտել Արևուտքից եկող վարկածներ «քաղաքակրթությունների բախման», «մարդկության ոսկե միլիարդի», «Արևել-Արևուտք հայամարտության» շուրջ։ Հանկարծ պարզ է դարձել, որ մեր մոլորակի բարիքները բոլորին չեն բավականացնելու, և միայն «ոսկե փոքրանանության» ընտրյալները կմտնեն նոր դարաշրջան։ Եթե այդպես է՝ սկսվել է կատաղի պայքար ռեսուրսների համար։ Արևուտքը առաջին անգամ հրաժարվում է պատմության հետ համագործակցելուց և նրան վերաբերվում է խիստ կասկածով։ Այս տրամադրությունները վկայում են ժամանակակից Եվրոպական քաղաքակրթության ձգնաժամի նախին։ Ավելին, ժամանակակից արևոտյան լիբերալիզմի պարադոքսն այն է, որ Արևուտքի և ոչ Արևուտքի միջև փոխհարաբերության ավտորիտար սկզբունքը ոչ թե մեղմանում է, այլ ավելի ու ավելի է կոշտանում։ Ոչ արևոտյան աշխարհը, ի պատասխան դրան, այլևս չի ցանկանում հաշտվել ուրիշի կամքի օբյեկտը լինելու կարգավիճակի հետ։

XIX դարի Եվրոպայում նկատվում է «երաշխավորված պատմության փնտրություն», որը Ենթարկվում է անխախտելի օրինաչփությունների և թափանցիկ է գիտական բանականության համար: Սա վկայում է դեռևս Երիտասարդ Եվրոպական գիտության ինքնավստահության մասին, որը վճռականորեն որոշում է կարգավորել պատմական գործընթացը: Ժամանակակից հետդասական գիտությունը կտրականացն իրաժարվել է նման նկրտումներից: Աշխարհի նոր գիտական պատկերի մեջ չկան զարգացնան երաշխավորված ուղեծրեր, որոնք ունեն անխախտելի օրինաչփություններ:

Մխիթարյանների պատմության ընթանումը, առաջին հերթին պատմության ողջ ընթացքով պայմանավորված, խարսխվում է իր ներքին պատմական տրամաբանությունն ունեցող մշակույթի միասնական պահպանության և պատմական ժառանգորդման վրա: Հայոց պատմությունը իր տրամաբանական-հոգեբանական-արժեքային կողմնորոշումներով արմատապես տարբերվում է այլ ժողովուրդների պատմություններից, քանի որ այն կարող է գոյություն ունենալ՝ միայն պահպանելով հայ մշակույթը որպես հայ գենոֆոնի գոյատևման միակ միջոց (անգամ պետականության բացակայության դեպքում): Հայոց պատմության այս ուղերձը Մխիթարյան Սեբաստացին ընդունեց իբրև պատմության ռազմավարություն, հայկականության ծրագիր և պատմության քաղաքականություն:

### Օգտագործված գրականություն

1. Յ.Դ. Սիրունի «Մխիթարեանք ինչ տուին մեզի» Յառաջ, Փարիզ, 1936, օրաթերթ, N 3279, 26 նոյեմբեր:
2. Լ. Չորմինեան, Համապատկեր արեւմտահայոց մեկ դարու պատմութեան, Ա հաստոր, 1850-1878, Պէյրութ, Դոնիկեան և Եղբայրներ հրատ. 1972, մաս 4:
3. Լեօ, Հայկական տպագրութիւն Հտ Բ, մաս Ա, էջ 47, Տիղիս, 1901:
4. Խորեն Ծայրագոյն Վարդապետ Ստեփանե, Ս. Պետերբուրգ. 1889, Առաջարան, ԶՈ:
5. Ա. Զօպանյան, Անահիտ, 1901, թիվ 8:
6. Վարք Մխիթարյա Աքքայի Սեբաստացոյ, գրեց Յովհաննէս Վ. Թորոսեան, Յուլիստէն Մխիթարյա, Վենետիկ, 1932:
7. Գարդիել Վ. Այվազովսկի, Ուրուազիծ, ոգլու և ընթացից Մխիթարեան միաբանութեան Վենետիկ, Փարիզ, 1857:
8. Նեյման Մ., Արմանե. Կրատկի очеркъ ихъ исторіи и современного положенія. С.Петербургъ, Типографія Ю.И.Эрлих, 1899.
9. Историческая акцентология и сравнительно-исторический метод, М., Наука, 1989.

**АНАИТ КАЗАРЯН**

Ассистент кафедры философии и истории АГЭУ

**Армянское национальное возрождение как предшествующий период Восточно-европейского Возрождения.**— Национальное возрождение, которое используется в научной литературе по отношению к чешской, словацкой, болгарской и сербской культурам, считается продолжением западного Ренессанса в Восточной Европе.

Национальное возрождение в истории Армении начинается в восемнадцатом веке, и в научной литературе оно называется «Мхитарянское возрождение». В восемнадцатом веке начинается духовное возрождение армянской нации, когда благодаря мхитарянцам открылись закрытые двери между европейской цивилизацией и армянской реальностью. Братство Мхитаристов систематизировало сокровища армянской культуры и представило их Западу. Армянское Национальное возрождение является первым в мировом историческом процессе и предшествует восточноевропейскому возрождению на одно столетие. Мхитар Себастаци и мхитаристы начали мощное образовательное, научное, моральное, лингвистическое и идеологическое историческое движение, восстановливая прерванные традиции и многовековые связи, что стало уникальным университетом для образования всей нации. Мхитаристы попытались изнутри революционировать армянский дух, прежде всего восстановив интеллектуальные силы армянской идентичности и заставив армянский народ гордиться своей историей. Культурное возрождение было осуществлено с долгосрочной целью приобретения политической независимости. Это было сверхзадачей национального возрождения.

Мхитарянская философия истории рассматривает нацию как субъект истории, активный, конструктивный и очень заинтересованный в своем лучшем будущем. Такое понимание истории даст новую возможность, как это было несколько раз в нашей многовековой истории, реабилитироваться после множества поражений и гордо смотреть в историческое будущее.

**Ключевые слова:** армянское национальное возрождение, армянское пробуждение, историческая закономерность, культурное возрождение, столкновение цивилизаций, мхитарянская национальная культурная политика, восточно-европейское возрожденческое движение, мхитарянская философия истории.

JEL: Z10

**ANAHIT GHAZARYAN**

*Assistant at the Chair of Philosophy and Armenian History at ASUE*

***Armenian National Renaissance as a Preceding Period of Eastern European Renaissance.***— The National revival, which is used in scientific literature in relation to the Czech, Slovak, Bulgarian and Serbian cultures, is considered a continuation of the Western Renaissance in Eastern Europe.

The National revival in Armenian history begins in the eighteenth century, and in the scientific literature is called "Mekhitarist revival". In the eighteenth century, the spiritual revival of the Armenian nation began when the Mkhitarists opened the closed doors between the European civilization and the Armenian reality. The Mekhitarists systematized the treasures of Armenian culture and presented them to the West. The Armenian national revival is the first in the world historical process and precedes the Eastern European revival by one century. Mekhitar of Sebaste and the Mekhitarists established a powerful educational, scientific, moral, linguistic and ideological historical movement, restoring broken traditions and centuries-old ties, which became a unique university for the education of the whole nation. The Mekhitarists tried to reverse the Armenian spirit, first of all, by restoring the intellectual forces of the Armenian identity and making the Armenian people proud of their past. Cultural renaissance was accomplished with the long-term goal of political independence. It was the foremost task of national revival.

The Mekhitarists' philosophy of history considers the nation as a subject of history, active, constructive and very interested in its best future. Such an understanding of history will give a new opportunity to rehabilitate after constant defeats, as it has been several times in our centuries-old history, and to look proudly to the historical future.

**Key words:** *Armenian national revival, Armenian awakening, historical regularity, cultural revival, clash of civilizations, Mekhitarists' national cultural policy, Eastern European movement, Mekhitarists' philosophy of the history.*

JEL: Z10